

Հայտարարություն

Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթների արդյունքները հրապարակելու և նոր մրցույթ հայտարարելու մասին:

Սյունիքի ներմարզային մրցութային հանձնաժողովը Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության համար 2013 թվականի հոկտեմբերի 22-ին, հոկտեմբերի 23-ին և հոկտեմբերի 24-ին անց է կացրել մրցույթներ:

Մրցույթի հաղթողներ են ճանաչվել.

1. <<Աքել>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ Սիսիանի տարածաշրջանի <<Սիսիան-Բոնակոթ>> ներմարզային երթուղում,
2. Անհատ ձեռնարկատեր Արամ Վարդանյանը՝ Սիսիանի տարածաշրջանի <<Սիսիան-Գորիս>> ներմարզային երթուղում,
3. <<Սամուել Տրանս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ Գորիսի տարածաշրջանի <<Գորիս-Ակներ>> ներմարզային երթուղում,
4. <<Լաստ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ Գորիսի տարածաշրջանի <<Գորիս-Քարահունջ>> ներմարզային երթուղում,
5. <<Կապանի ԲՈՒԱՏ>> փակ բաժնետիրական ընկերությունը՝ Կապանի տարածաշրջանի <<Կապան-Քաջարան>> ներմարզային երթուղում:

<<Սիսիան - Շամբ - Լծեն>>, <<Սիսիան - Կապան>>, <<Սիսիան - Աշոտավան - Հացավան - Թասիկ>>, <<Սիսիան - Իշխանասար>>, <<Գորիս - Որոտան>>, <<Գորիս - Խնածախ - Վաղատուր-Խոզնավար>>, <<Գորիս-Տեղ-Կոռնիձոր>>, <<Գորիս-Հարթաշեն>>, <<Գորիս-Հարժիս>>, <<Գորիս - Բարձրավան>>, <<Մեղրի - Ագարակ>>, <<Կապան - Դավիթ - Բեկ>>, <<Կապան - Ճակատեն - Շիկահող - Սրաշեն - Ն.Հանդ - Ծավ>>, <<Կապան - Սևաքար-Եղեգ>>, <<Կապան - Գեղի>>, <<Կապան - Սյունիք>>, <<Մեղրի-Կապան>>, <<Սիսիան-Դարբաս - Գետաթաղ - Լոր - Լեռնաշեն>> երթուղիների համար մրցութային հայտեր չեն ներկայացվել:

Մրցութային հանձնաժողովը օրենքով սահմանված կարգով մրցույթում չկայացած նշված երթուղիների համար 2013 թվականի նոյեմբերի 25-ին կհայտարարի նոր մրցույթ:

Մրցույթը տեղի կունենա ք. Կապան Գ. Նժդեհ 1 հասցեում գտնվող Սյունիքի մարզպետարանի վարչական շենքում: Հայտերը ներկայացնելու վայրը, օրերը, ժամերը՝ ք. Կապան Գ. Նժդեհ 1 հասցեում գտնվող Սյունիքի մարզպետարանի վարչական շենքում, աշխատանքային օրերին՝ ժամը 10⁰⁰ մինչև 17⁰⁰, Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը նոյեմբերի 20-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք 0285-24252:

Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N762 որոշման պահանջների համաձայն:

Մրցութային հանձնաժողով